բացակայությունը, քանի որ ներկայացված ապացույցները հանդիսանում են վստահորդի տիրապետման ներքո գտնվող և ծառայությունների բնույթը, այն է՝ հայցադիմումի պատասխանի կազմում և ներկայացում, իրավական խորհրդատվություն, Դատարանը գտնում է, որ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար հայցվորից ենթակա է գանձման 40000 ՀՀ դրամ գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը մերժել:

2. «Ավտոֆան Էյ Սի» ՍՊ ընկերությունից հօգուտ պատասխանող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի բռնագանձել 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, մնացած մասով դատական ծախսի պահանջը մերժել և դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարվելու դեպքում կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am